

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Քնարիկ Հրահատի Խաչատրյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության բարելավումը ՀՀ արտադրական կազմակերպություններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Քնարիկ Խաչատրյանի ատենախոսությունը իրենից ներկայացնում է ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների և ծախսերի բյուջետավորման ու վերահսկողության տեսական - մեթոդաբանական հարցերին, ինչպես նաև դրանց բարելավման ուղիներին:

Հայաստանի Հանրապետությունում ևս արտադրական կազմակերպությունները մրցակցային բարենպաստ դիրքեր ապահովելու համար ձգտում են հնարավորինս կարգաբերել եկամուտների և ծախսերի ձևավորման գործընթացը, որից անմասն չեն մնում նաև դրանց բյուջետավորումն ու վերահսկողությունը: Կայուն զարգացման համատեքստում եկամուտների և ծախսերի հաշվետվողականության հիմնախնդիրներն առավել ցայտուն են դրսևորվում սննդի արդյունաբերության ոլորտում, որտեղ հստակ կերպով գործում է «գյուղատնտեսություն - սննդի վերամշակում - սննդամթերքի վերջնական իրացում» արժեքային շղթան: Ատենախոսությունում եկամուտների ու ծախսերի բյուջետավորման, վերահսկողության հիմնախնդիրների քննարկումներն ու համապատասխան լուծումների առաջադրումները կատարվել են ՀՀ սննդի վերամշակման արտադրական կազմակերպությունների շրջանակում: ՀՀ արտադրական կազմակերպությունների ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի բարելավմանը միտված գործողությունները դեռևս շտկման ու կատարելագործման, իսկ առկա հիմնախնդիրները՝ խորքային լուծման կարիք ունեն: Բերված փաստարկները հավաստում են ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է հետազոտել և բարելավման ուղիներ ներկայացնել ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի, ֆինանսական արդյունքների բյուջետավորման, հաշվառման և վերահսկողական ժամանակակից առաջադեմ համակարգի ներդրման հիմնախնդիրների լուծման ուղղություններով: Մասնավորապես, ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բյուջետավորման ներառմամբ մշակել արտադրական կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի հաշվետվողականության մեխանիզմ,
- ուսումնասիրել եկամուտներից ու ծախսերից ձևավորվող ֆինանսական արդյունքների գծով պատասխանատվության համակարգը,
- ներկայացնել պատասխանատվության կենտրոններով ֆինանսական արդյունքների տեղեկատվական հոսքերի վերահսկողության մեխանիզմ,
- ներկայացնել եկամուտների ու ծախսերի բյուջետավորման գործընթացի արդյունքների հիմնավորվածության վերահսկողության մոտեցում,
- ուսումնասիրել կազմակերպությունների ստանձնած սոցիալական պատասխանատվության կատարողականները՝ առաջարկելով դրանց վերլուծության որոշ մոտեցումներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ արտադրական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի բյուջետավորման և դրա վերաբերյալ հաշվետվողականության տեսամեթոդական հիմքերը» գլխում քննարկվել են արտադրական կազմակերպություն-

ներում եկամուտների և ծախսերի բյուջետավորման մոտեցումները, ներկայացվել են ֆինանսական արդյունքների վերահսկողության շրջանակը, ինչպես նաև դրանց հաշվետվողականության մարտահրավերները:

Ներկայումս, բյուջետավորումը չի սահմանափակվում միայն վերահսկողության ոլորտով, այլ ընդգրկում է կառավարչական հավելյալ գործառույթներ: Հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջանում արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի բյուջետավորումը դիտարկել որպես ֆինանսական կառավարման եղանակ, որը կարող է կիրառվել նաև բիզնես մոդելի արժեքային շղթայի կարգավորման գործընթացում: Արտադրական կազմակերպություններում որպես եկամուտների ու ծախսերի վերահսկողության բարելավման ուղղություն, հեղինակը նախևառաջ առաջարկում է ընդլայնել վերահսկողության կարգավորիչ գործառույթները, ինչպես նաև կիրառել բիզնեսի արժեշտային վերլուծություն՝ պարզելու ոչ միայն արտադրական գործընթացի յուրաքանչյուր օղակի բացթողումներն ու ձեռքբերումները, այլև գնահատելու կազմակերպությունների հնարավոր ֆինանսական կարողությունները, ֆինանսական ռիսկերի կանխարգելման հնարավորությունները, ձևավորել համապատասխան պայմաններ՝ պատասխանատվության ինստիտուտի ներդրման առումով, որը թույլ կտա բացահայտել ոչ միայն անբարենպաստ շեղումները, այլև ընդլայնել բյուջետավորման շրջանակն ըստ ֆինանսական և ոչ ֆինանսական ուղղությունների:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ֆինանսական արդյունքների բյուջետավորման և վերահսկողության բարելավումը կառավարչական հաշվառման գործիքակազմով»** գլխում քննարկվել են ֆինանսական արդյունքների բյուջետավորման, պատասխանատվության կենտրոններով եկամուտների և ծախսերի տեղեկատվական համակարգի բարելավման հիմնախնդիրները:

Կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի բյուջետավորումը և կառավարչական հաշվառումը սերտ փոխառնչության մեջ են՝ հատկապես վերահսկողության գործառույթների տեսանկյունից: Կառավարչական հաշվառման կիրառումը բյուջետավորման համակարգում արդյունավետ է այն պարագայում, երբ կազմակերպությունում գործում են եկամուտների ու ծախսերի պատասխանատվության կենտրոններ, որոնք գնահատում են շրջանաձև արտադրության կազմակերպման հնարավորությունները, ստորաբաժանումներում արձանագրվող անբարենպաստ ֆինանսական արդյունքները, ռիսկերի

կանխարգելման եղանակները, ինչպես նաև որոշակի պատասխանատվության կենտրոնի բաժնեմասը կազմակերպության ֆինանսական արդյունքների ձևավորման գործընթացում

ՖՊԿ-ներում արձանագրվող ֆինանսական շեղումների հասցեականության ապահովման նկատառումով հեղինակը կրկնակի գրանցման հիմքով կիրառել է կառավարչական հաշվառման հատուկ հաշիվների և հաշվային թղթակցությունների գործիքակազմ՝ ներկայացնելով **գիտական նորույթի առաջին կետ բերված մոտեցումը**: Այն թույլ է տալիս արձանագրել կառավարչական հաշվառմամբ ֆինանսական արդյունքների տեղեկատվական հոսքերը՝ թիրախավորելով պատասխանատվության կենտրոններում ծախսահատույցի վերլուծությունը և ֆինանսական արդյունքների որակական գնահատումը, որով հնարավորություն է ստեղծվում վարկանշավորելու յուրաքանչյուր պատասխանատվության կենտրոնը՝ իր գործունեության ֆինանսական արդյունավետության տեսանկյունից:

Հեղինակը ներկայացնում է նաև որպես **գիտական նորույթի երրորդ կետ բերված մոտեցումը՝** եկամուտների ու ծախսերի բյուջետավորման գործընթացի արդյունքների մշտադիտարկումը, որը թույլ է տալիս գնահատել սահմանված ծախսային նախահաշիվների հիմնավորվածությունը, համոզվելու համար, որ չկա որևէ միտում համապատասխան նորմերի մակարդակի բարձրացման տեսանկյունից, կազմակերպել ծախսային նախահաշիվներից շեղումների արձանագրման գործընթացը՝ կարգաբերելով շեղումների օպերատիվ արձագանքման ոլորտը, իրականացնել պատշաճ փաստաթղթավորում և ապահովել ներկառավարչական հաշվետվողականություն:

Ատենախոսության երրորդ՝ «Արտադրական կազմակերպությունների եկամուտների եվ ծախսերի վերահսկողության բարելավումը կայուն զարգացման համատեքստում» գլխում քննարկվել են կայուն զարգացման համատեքստում արտադրական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի վերահսկողության և հաշվետվողականության բարելավման հնարավորությունները և ուղիները:

Գործարարության արդյունավետությունը, որը ոչ վաղ անցյալում որպես կանոն չափվում էր շահութաբերության տեսանկյունից և հիմնականում հետապնդում էր մասնավոր շահ, ներկայում ընդլայնել է իր բովանդակությունը՝ ընդգրկելով սոցիալական պատասխանատվության ոլորտը և դրանով իսկ արժանանալով նաև հանրային գնահատման: Մերօյա կազմակերպությունները մասնավոր ֆինանսական բարենպաստ ցուցանիշների նպատակադրումից բացի, աստիճանաբար ստանձնում են նաև սոցիալական

պարտավորություններ, որոնցից խուսափելու պարագայում նրանց առջև ծառանում են գործարար հեղինակության կորստի բազմաբնույթ ռիսկեր; Միաժամանակ, իրենց գործարար հեղինակությունը բարձրացնելու և մրցակցային դիրքերն ապահովելու համար կազմակերպությունները ներկայումս ձգտում են կազմակերպել շրջանաձև արտադրություն, որը ենթադրում է արտադրական թափոնների «հավաքագրում-վերամշակում-դեպի արտադրություն վերաուղղում» շրջափուլի իրականացում: Ընդ որում, թափոնների վերամշակումն ու օգտագործումը, որպես շրջափուլի մի հատված, նախանշում են ոչ միայն եկամուտների ստացում, այլև հավելյալ ծախսերի կատարում, ուստի խնդիր է ծագում՝ ստանալու այդ շրջափուլին առնչվող ֆինանսական տեղեկատվություն: Հետևաբար՝ գործնականում շրջանաձև արտադրության ֆինանսական հետևանքների հաշվառումն ու հաշվետվողականությունը սպասում են իրենց մեթոդաբանական լուծումներին, որոնք կվերաբերեն նաև սննդի վերամշակմանը:

Շրջանաձև արտադրությունում ֆինանսական արդյունքների տեղեկատվական հոսքերի հաշվետվական բացահայտումների համար առաջարկվել են մի շարք հաշիվներ և հաշվապահական թղթակցություններ, որոնք կրկնակի գրանցման հիմքով թույլ կտան արձանագրել թափոնների վերամշակման ֆինանսական հետևանքները փակ և բաց շրջափուլերի պարագայում: **Արդյունքում ձևավորվել է որպես գիտական նորույթի երկրորդ կետ ներկայացվող մոտեցումը**, որտեղ հեղինակը ներկայացրել է եկամուտների ու ծախսերի բյուջետավորման համատեքստում մշակված՝ հաշվետվությունների ինտեգրման մոտեցում՝ ֆինանսական արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելով IFRS-S ստանդարտներին և գործարարության կայուն զարգացման չափանիշներին համահունչ:

Հետազոտությունում հեղինակը կարևորել է կազմակերպությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) կատարողականի չափումը, և այդ նպատակով մշակվել է համաթիվ, որը հնարավորություն է ընձեռնում վերլուծելու կայուն զարգացման ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքները՝ դրանով ներկայացնելով **գիտական նորույթի չորրորդ կետում բերված մոտեցումը**:

Եզրակացություն բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության օբյեկտը ՀՀ արտադրական կազմակերպություններն են, իսկ առարկան՝ եկամուտների ու ծախսերի բյուջետավորման, հաշվառման վերահսկողության հիմնախնդիրները:

Ատենախոսությունը արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի բյուջետավորման, հաշվառման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վերահսկողության ներդրման մեթոդական մոտեցումների, տեսական ու գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված կազմակերպություններում ֆինանսական պատասխանատվության ինստիտուտի նպատակադրումների և կայուն զարգացման գործառույթների հաշվետվողականության բարելավմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Եկամուտների և ծախսերի բյուջետավորման մոտեցումները ներկայացվել են հաշվի առնելով օտարերկրյա փորձը, սակայն ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը ներկայացներ թե կոնկրետ որ երկրների կազմակերպությունների փորձն է ներկայացվում, ինչպես նաև մեջբերվեին քանակական և որակական համեմատական վերլուծություններ միջազգային համբավ ունեցող արտադրական կազմակերպությունների հաշվետվությունների հետ:
2. Ատենախոսության 1-ին գլխի գծապատկեր 1.3.2-ում ատենախոսը ներկայացրել է եկամուտների և ծախսերի հաշվետվողականության գծապատկեր, որտեղ եկամուտների և ծախսերի բյուջետավորմանը հետևում է շեղումների հաշվետվողականությունը, մինչդեռ մեր կարծիքով այստեղ գոյություն ունեն ևս մեկ փուլ՝ փաստացի ցուցանիշների հաշվետվությունը, հետո նոր՝ շեղումներինը: Ատենախոսությունը առավել կշահեր, եթե ներկայացվեր նաև այդ փուլը:

3. Ատենախոսության 3-րդ գլխի գծապատկեր 3.1.1-ում տրվում է սոցիալական պատասխանատվության հաշվառման կառավարչական սխեմա, որը մեր կարծիքով առավել կշահեր, եթե ցուցանիշների գնահատման և ճանաչման մոտեցումները ներկայացվեին հաշվառման հետ համեմատական վերլուծությամբ:
4. Ատենախոսության 3-րդ գլուխը վերնագրված է «Արտադրական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի վերահսկողության բարելավումը կայուն զարգացման համատեքստում»: Սակայն, ՄԱԿ-կողմից սահմանված կայուն զարգացման ոչ բոլոր թիրախային ուղղություններն են քննարկվել (դրանք թվով 17-ն են) և ներառել ատենախոսության մեջ առաջարկվող հաշվետվողական համակարգում: Ատենախոսությունը կշահեր, եթե քննարկման առարկա դարձվեին ոչ միայն շրջակա միջավայրի պահպանման, այլև՝ բնակչության սոցիալական, գենդերային հիմնախնդիրները, որոնք ներառված են միջազգայնորեն ճանաչված կայուն զարգացման համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողություններով հանդերձ՝ Քնարիկ Խաչատրյանի «**Եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության բարելավումը ՀՀ արտադրական կազմակերպություններում**» թեմայով ատենախոսությունը կարելի է գնահատել որպես ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության վերաբերյալ տեսական և գործնական կարևոր հիմնախնդիրների առաջադրում, հետազոտության արդյունքում հեղինակային լուծումների մշակում:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, իսկ հիմնական դրույթները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում:

Սեղմագիրը կազմված է ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Քնարիկ Հրահատի Խաչատրյանի «Եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության բարելավումը ՀՀ արտադրական կազմակերպություններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը՝ **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտության գծով:

Պաշտոնական ընդդիմախոս՝

**ՀՀ ֆինանսների նախարարության
հաշվապահական հաշվառման և աուդիտորական
գործունեության կարգավորման, հաշվետվությունների
մշտադիտարկման վարչության պետ,
տնտեսագիտության թեկնածու**



Կ. Ի. Ավակյան
23 դեկտեմբերի 2024թ.

**Կ. Ի. Ավակյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ**

**ՀՀ ֆինանսների նախարարության
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող**



Ա. Լ. Եսայան
23 դեկտեմբերի 2024թ.